



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016 թվականի երրորդ եռամսյակում (վերլուծություն)

2016 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 43323 գործարք, որոնց քանակը 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 2.5 %-ով, իսկ 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ 7.4 %-ով:

2016 թվականի երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 12435 օտարման գործարքի 71.4 %-ը կազմել է առուվաճառքը, 28.2 %-ը՝ նվիրատվությունը և 0.4 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.5 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 39.5 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2016 թվականի երրորդ եռամսյակում, 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 9.8 %-ով, իսկ 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 3.0 %-ով:

2016 թվականի երրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 67.5 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի երրորդ եռամսյակում, 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 17.4 %-ով, իսկ 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 5.7 %-ով:

2016 թվականի երրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

| Վարչական շրջաններ                              | Միջին գները<br>(դրամ)   |                         |                          |
|--|-------------------------|-------------------------|--------------------------|
|  | Երրորդ եռամսյակ 2015 թ. | Երրորդ եռամսյակ 2016 թ. | Երկրորդ եռամսյակ 2016 թ. |
| Կենտրոն  | 428000                  | 428250                  | 428100                   |
| Արաբկիր  | 356600                  | 357350                  | 357100                   |
| Քանաքեռ-Զեյթուն                                | 282750                  | 283150                  | 283100                   |
| Նոր Նորք                                       | 253300                  | 254300                  | 254200                   |
| Ավան   | 260750                  | 261800                  | 261600                   |
| Էրեբունի                                       | 252100                  | 252350                  | 252300                   |
| Շենգավիթ                                       | 257300                  | 257700                  | 257600                   |
| Դավթաշեն                                       | 276050                  | 276800                  | 276700                   |
| Աջափնյակ                                       | 250250                  | 251100                  | 251000                   |
| Մալաթիա-Սեբաստիա                               | 243400                  | 244200                  | 244050                   |
| Նուբարաշեն                                     | 156800                  | 157450                  | 157300                   |
| <b>Միջինը Երևանում<br/>(բացի Նորք-Մարաշից)</b> | <b>274300</b>           | <b>274950</b>           | <b>274800</b>            |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականի երրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 0.1 %-ով:

2016 թվականի երրորդ եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 998 բնակարան, որի քանակը, 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 10.0%-ով, իսկ 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ 1.3 %-ով:

2016 թվականի երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

| Մարզեր      | Քաղաքներ    | Միջին գները<br>(դրամ)         |                               |                                |
|-------------|-------------|-------------------------------|-------------------------------|--------------------------------|
|             |             | Երրորդ<br>եռամսյակ<br>2015 թ. | Երրորդ<br>եռամսյակ<br>2016 թ. | Երկրորդ<br>եռամսյակ<br>2016 թ. |
| Արագածոտն   | Աշտարակ     | 116000                        | 116050                        | 116050                         |
|             | Ապարան      | 57900                         | 58500                         | 58400                          |
|             | Թալին       | 66200                         | 66850                         | 66800                          |
| Արարատ      | Արտաշատ     | 97900                         | 98900                         | 98800                          |
|             | Մասիս       | 115800                        | 115800                        | 115800                         |
|             | Վեդի        | 101450                        | 101750                        | 101700                         |
|             | Արարատ      | 76800                         | 77550                         | 77500                          |
| Արմավիր     | Վաղարշապատ  | 154100                        | 154200                        | 154200                         |
|             | Արմավիր     | 121200                        | 121250                        | 121250                         |
|             | Մեծամոր     | 87550                         | 87600                         | 87600                          |
| Գեղարքունիք | Սևան        | 99400                         | 99400                         | 99400                          |
|             | Գավառ       | 60200                         | 60600                         | 60550                          |
|             | Մարտունի    | 107700                        | 107700                        | 107700                         |
|             | Վարդենիս    | 44900                         | 45300                         | 45250                          |
|             | Ճամբարակ    | 28700                         | 28800                         | 28750                          |
| Լոռի        | Վանաձոր     | 88500                         | 88600                         | 88600                          |
|             | Ստեփանավան  | 74600                         | 74750                         | 74750                          |
|             | Սպիտակ      | 99800                         | 99850                         | 99850                          |
|             | Ալավերդի    | 55300                         | 55900                         | 55800                          |
|             | Տաշիր       | 47350                         | 47400                         | 47400                          |
|             | Թումանյան   | 11000                         | 11000                         | 11000                          |
|             | Շամլուղ     | 8000                          | 8000                          | 8000                           |
|             | Ախթալա      | 20500                         | 20500                         | 20500                          |
| Կոտայք      | Աբովյան     | 155100                        | 155150                        | 155150                         |
|             | Նոր Հաճն    | 128550                        | 128550                        | 128550                         |
|             | Բյուրեղավան | 108200                        | 108250                        | 108250                         |
|             | Եղվարդ      | 109400                        | 109900                        | 109850                         |
|             | Հրազդան     | 63800                         | 63900                         | 63900                          |
|             | Ծաղկաձոր    | 292400                        | 292400                        | 292400                         |
|             | Չարենցավան  | 85500                         | 85500                         | 85500                          |
| Շիրակ       | Գյումրի     | 109250                        | 109450                        | 109450                         |
|             | Արթիկ       | 66800                         | 67400                         | 67250                          |
|             | Մարալիկ     | 40800                         | 41100                         | 41050                          |
| Սյունիք     | Գորիս       | 123000                        | 123850                        | 123650                         |
|             | Կապան       | 94100                         | 95300                         | 95000                          |
|             | Սիսիան      | 92000                         | 92200                         | 92200                          |
|             | Մեղրի       | 82200                         | 83200                         | 82950                          |
|             | Ագարակ      | 47300                         | 47750                         | 47700                          |
|             | Քաջարան     | 94600                         | 94950                         | 94900                          |
|             | Դաստակերտ   | 8000                          | 8000                          | 8000                           |
| Վայոց ձոր   | Վայք        | 95000                         | 95100                         | 95100                          |
|             | Եղեգնաձոր   | 125600                        | 126300                        | 126200                         |
|             | Ջերմուկ     | 112950                        | 113300                        | 113200                         |
| Տավուշ      | Դիլիջան     | 114350                        | 115600                        | 115500                         |
|             | Իջևան       | 118400                        | 118550                        | 118550                         |
|             | Բերդ        | 60300                         | 60450                         | 60450                          |
|             | Նոյեմբերյան | 50150                         | 50400                         | 50400                          |
|             | Այրում      | 31850                         | 31900                         | 31850                          |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2016 թվականի երրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 0.1 %-ով:

2016 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 1087 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 328 գործարք, մարզերում՝ 759 գործարք: 2016 թվականի երրորդ եռամսյակում, 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 9.8 %-ով, ընդ որում, Երևանում՝ 3.8 %-ով, մարզերում՝ 12.6 %-ով, իսկ 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 3.1 %-ով, ընդ որում, Երևանում՝ 10.1 %-ով, իսկ մարզերում՝ 0.4 %-ով:

2016 թվականի երրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ<sup>2</sup> և տնամերձի 400.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Վարչական շրջաններ                    | Միջին գները<br>(դրամ)   |                         |                          |
|--------------------------------------|-------------------------|-------------------------|--------------------------|
|                                      | Երրորդ եռամսյակ 2015 թ. | Երրորդ եռամսյակ 2016 թ. | Երկրորդ եռամսյակ 2016 թ. |
| Կենտրոն                              | 476100                  | 476350                  | 476200                   |
| Արաբկիր                              | 383000                  | 383200                  | 383100                   |
| Քանաքեռ-Զեյթուն                      | 295000                  | 295000                  | 295000                   |
| Նորք-Մարաշ                           | 319200                  | 319300                  | 319200                   |
| Ավան                                 | 270500                  | 270600                  | 270500                   |
| Էրեբունի                             | 239750                  | 239750                  | 239750                   |
| Շենգավիթ                             | 255000                  | 255000                  | 255000                   |
| Դավթաշեն                             | 276000                  | 276100                  | 276000                   |
| Աջափնյակ                             | 250050                  | 250100                  | 250100                   |
| Մալաթիա-Սեբաստիա                     | 238000                  | 238100                  | 238100                   |
| Նուբարաշեն                           | 150800                  | 150800                  | 150800                   |
| Միջինը Երևանում<br>(բացի Նոր Նորքից) | <b>286700</b>           | <b>286800</b>           | <b>286700</b>            |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականի երրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 0.03 %-ով:

2016 թվականի երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ<sup>2</sup> և տնամերձի 1000.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Մարզեր      | Քաղաքներ    | Միջին գները<br>(դրամ)         |                               |                                |
|-------------|-------------|-------------------------------|-------------------------------|--------------------------------|
|             |             | Երրորդ<br>եռամսյակ<br>2015 թ. | Երրորդ<br>եռամսյակ<br>2016 թ. | Երկրորդ<br>եռամսյակ<br>2016 թ. |
| Արագածոտն   | Աշտարակ     | 136200                        | 136250                        | 136200                         |
|             | Ապարան      | 60050                         | 60050                         | 60050                          |
|             | Թալին       | 69250                         | 69250                         | 69250                          |
| Արարատ      | Արտաշատ     | 100000                        | 100100                        | 100000                         |
|             | Մասիս       | 115100                        | 115100                        | 115100                         |
|             | Վեդի        | 102300                        | 102300                        | 102300                         |
|             | Արարատ      | 88000                         | 88000                         | 88000                          |
| Արմավիր     | Վաղարշապատ  | 153100                        | 153150                        | 153100                         |
|             | Արմավիր     | 107000                        | 107000                        | 107000                         |
| Գեղարքունիք | Սևան        | 94850                         | 94950                         | 94950                          |
|             | Գավառ       | 57100                         | 57100                         | 57100                          |
|             | Մարտունի    | 96100                         | 96200                         | 96100                          |
|             | Վարդենիս    | 41000                         | 41150                         | 41150                          |
|             | Ճամբարակ    | 31100                         | 31100                         | 31100                          |
| Լոռի        | Վանաձոր     | 100550                        | 100900                        | 100900                         |
|             | Ստեփանավան  | 91000                         | 91200                         | 91200                          |
|             | Սպիտակ      | 114000                        | 114050                        | 114000                         |
|             | Ալավերդի    | 50200                         | 50300                         | 50200                          |
|             | Տաշիր       | 51900                         | 51900                         | 51900                          |
|             | Թումանյան   | 12000                         | 12000                         | 12000                          |
|             | Շամլուղ     | 14000                         | 14000                         | 14000                          |
|             | Ախթալա      | 30000                         | 30000                         | 30000                          |
| Կոտայք      | Արուսյան    | 157200                        | 157350                        | 157300                         |
|             | Նոր Հաճն    | 129800                        | 129800                        | 129800                         |
|             | Բյուրեղավան | 120500                        | 120500                        | 120500                         |
|             | Եղվարդ      | 116100                        | 116100                        | 116100                         |
|             | Հրազդան     | 82600                         | 82600                         | 82600                          |
|             | Ծաղկաձոր    | 305000                        | 305000                        | 305000                         |
|             | Չարենցավան  | 83000                         | 83000                         | 83000                          |
| Շիրակ       | Գյումրի     | 119050                        | 119300                        | 119250                         |
|             | Արթիկ       | 63100                         | 63450                         | 63450                          |
|             | Մարալիկ     | 52000                         | 52000                         | 52000                          |
| Սյունիք     | Գորիս       | 130000                        | 130050                        | 130000                         |
|             | Կապան       | 100500                        | 100750                        | 100700                         |
|             | Սիսիան      | 96500                         | 96500                         | 96500                          |
|             | Մեղրի       | 84500                         | 84650                         | 84600                          |
|             | Ագարակ      | 46900                         | 46950                         | 46900                          |
|             | Դաստակերտ   | 11610                         | 11610                         | 11610                          |
| Վայոց ձոր   | Վայք        | 90100                         | 90150                         | 90150                          |
|             | Եղեգնաձոր   | 116650                        | 116750                        | 116750                         |
|             | Զերմուկ     | 131300                        | 131300                        | 131300                         |
| Տավուշ      | Դիլիջան     | 115000                        | 115700                        | 115600                         |
|             | Իջևան       | 123200                        | 123250                        | 123200                         |
|             | Բերդ        | 60100                         | 60100                         | 60100                          |
|             | Նոյեմբեդյան | 48300                         | 48300                         | 48300                          |
|             | Այրում      | 36250                         | 36250                         | 36250                          |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ

Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել է 4241 միավոր (1711.60 հա) հող, որից Երևանում՝ 232 միավոր (23.53 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 2410 միավոր (1528.24 հա), որից Երևանում՝ 14 միավոր (4.33 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 1279 միավոր (115.73 հա), որից Երևանում՝ 120 միավոր (7.49 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 384 միավոր (27.20 հա), որից Երևանում՝ 83 միավոր (9.41 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 60 միավոր (32.63 հա), որից Երևանում՝ 14 միավոր (0.91 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 24 միավոր (3.94 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 72 միավոր (3.58 հա), որից Երևանում՝ 1 միավոր (1.39 հա)
- ջրային հող՝ 12 միավոր (0.28 հա) ընդհանուր մակերեսով:

2016 թվականի երրորդ եռամսյակում օտարված հողերից 3441 միավորի (1395.14 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 191 միավոր (18.43 հա), նվիրատվության գործարք՝ 775 միավոր (310.55 հա), որից Երևանում՝ 34 միավոր (4.17 հա) և փոխանակության գործարք՝ 25 միավոր (5.91 հա), որից Երևանում՝ 7 միավոր (0.93 հա):

Հանրապետությունում 2016 թվականի երրորդ եռամսյակում 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 0.5 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 2.2 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 3.8 %-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 32.6 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 230.30 հա, որից 216.76 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 29.2 %-ը կամ 1006 միավորը (368.62 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 54 միավոր (2.66 հա), իսկ 70.1 %-ը կամ 2413 միավորը (1026.08 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 136 միավոր (15.77 հա): 2016 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 22 գործարք (0.44 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացված է 2016 թվականի երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների,

հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

|             | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող |              |                                  |              |                                     |              |                               |              | Մասնավոր սեփականություն հանդիսացող |              |                                  |              |                                     |              |                               |              |
|-------------|---|--------------|----------------------------------|--------------|-------------------------------------|--------------|-------------------------------|--------------|------------------------------------|--------------|----------------------------------|--------------|-------------------------------------|--------------|-------------------------------|--------------|
|             | Գյուղ. նշանակության հողեր                       |              | Արդյունաբերական օբյեկտների հողեր |              | Բնակավայրերի հողեր                  |              |                               |              | Գյուղ. նշանակության հողեր          |              | Արդյունաբերական օբյեկտների հողեր |              | Բնակավայրերի հողեր                  |              |                               |              |
|             |   |              |                                  |              | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր |              | հասարակական կառուցապատ. հողեր |              |                                    |              |                                  |              | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր |              | Հասարակական կառուցապատ. հողեր |              |
|             | Միավոր  | Մակերես (հա) | Միավոր                           | Մակերես (հա) | Միավոր                              | Մակերես (հա) | Միավոր                        | Մակերես (հա) | Միավոր                             | Մակերես (հա) | Միավոր                           | Մակերես (հա) | Միավոր                              | Մակերես (հա) | Միավոր                        | Մակերես (հա) |
| Երևան       | 0   | 0.00         | 3                                | 0.35         | 25                                  | 0.83         | 26                            | 1.48         | 11                                 | 3.60         | 11                               | 0.56         | 71                                  | 3.72         | 42                            | 6.50         |
| Արագածոտն   | 80  | 66.54        | 6                                | 0.32         | 15                                  | 0.46         | 29                            | 0.99         | 157                                | 149.95       | 0                                | 0.00         | 71                                  | 8.20         | 2                             | 0.03         |
| Արարատ      | 70  | 58.24        | 3                                | 0.66         | 33                                  | 1.48         | 12                            | 0.14         | 201                                | 82.81        | 2                                | 0.22         | 118                                 | 10.05        | 8                             | 0.24         |
| Արմավիր     | 25  | 17.73        | 3                                | 0.47         | 3                                   | 0.06         | 9                             | 0.17         | 193                                | 199.03       | 0                                | 0.00         | 128                                 | 12.77        | 5                             | 0.06         |
| Գեղարքունիք | 11  | 13.43        | 7                                | 9.95         | 11                                  | 0.53         | 43                            | 6.48         | 197                                | 65.10        | 0                                | 0.00         | 103                                 | 11.52        | 5                             | 0.27         |
| Լոռի        | 10  | 3.52         | 3                                | 0.09         | 13                                  | 0.15         | 25                            | 0.80         | 246                                | 115.75       | 0                                | 0.00         | 34                                  | 3.11         | 8                             | 0.21         |
| Կոտայք      | 61  | 40.90        | 1                                | 0.36         | 59                                  | 2.81         | 21                            | 0.51         | 276                                | 116.25       | 1                                | 0.12         | 154                                 | 11.54        | 22                            | 1.56         |
| Շիրակ       | 99  | 26.54        | 2                                | 0.38         | 14                                  | 0.41         | 18                            | 1.56         | 74                                 | 69.64        | 4                                | 0.33         | 15                                  | 1.79         | 4                             | 0.04         |
| Սյունիք     | 40  | 40.50        | 7                                | 0.59         | 13                                  | 0.56         | 8                             | 1.08         | 61                                 | 71.27        | 0                                | 0.00         | 50                                  | 3.24         | 14                            | 0.26         |
| Վայոց ձոր   | 37  | 57.81        | 0                                | 0.00         | 1                                   | 0.01         | 3                             | 0.005        | 58                                 | 63.24        | 0                                | 0.00         | 19                                  | 1.95         | 3                             | 0.06         |
| Տավուշ      | 13  | 3.08         | 3                                | 0.37         | 37                                  | 2.96         | 21                            | 0.72         | 13                                 | 5.01         | 0                                | 0.00         | 21                                  | 1.96         | 1                             | 0.09         |
